Հ. Ա. ԱԴԻԲԵԿՅԱՆ

ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԻԴԵԱԼԻԶՄԸ ԵՎ ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Հարաբերականության տեսության շուրջը եղած մատերիալիզմի և իդեալիզմի պայքարը պայծառ էջեր մտցրեց իրար հետ անհաշտ փիլիսոփայությունների պայքարի պատմության մեջ։ Այն դեռևս շարունակվում է և հիմնականում տարվում ժամանակակից նեոպոզիտիվիզմի դեմ։ «Անկուսակցական», «չեզոք» փիլիսոփայությունը «քննադատում է» հարաբերականության տեսության թե՛ իդեալիստական և թե՛ մատերիալիստական մեկնաբանությունները։ Այդ «քննադատությունը» ձգտում է «ապացուցել», որ հարաբերականության տեսության եզրակացությունները անզոր են լուծելու մատերիալիստների և իդեալիստների վիճաբանությունը։ Այդ կապակցությամբ ժամանակակից նեոպոզիտիվիզմի հարաբերականության տեսության նկատմամբ ցույց տված մոտեցման հետազոտումը բերում է դեպի անցյալում տեղի ունեցած իդեալիստական՝ ինտուիտիվիստական, նեոպոզիտիվիստական և նեոկանտական մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են մինչև 1922 թ.։

Նախ նշենք, որ իդեալիստական ժամանակա-տարածական պատկերացումներն այս կամ այն չափով հենվում են նյուտոնյան ժամանակա-տարածական պատկերացումների մետաֆիզիկական կողմերի վրա։ Քանի որ հարաբերականության տեսության հետևությունները համատեղելի չեն նյուտոնյան պատկերացումների հետ, ակնհայտ է, որ նրանք պետք է հակասեին բերգսոնյան, շլիկյան և կասխիթերյան պատկերացումներին։

Բերգսոնյան ժամանակի և տարածության ինտուիտիվիստական հասկացությունները կառուցված են յուրահատուկ «զուտ տևականության» (длительность, durec) *հասկացության վրա*[1]*։ Նշված կատեգորիան հանդիսանում է ոչ միայն «ներքին զգայականության», «արտաքին զգայականության», այլ նաև «գիտակցության» հասկացության նախադրյալ։ Առաջնահերթը, որի մասին մենք կարող ենք խոսել, ըստ Բերգսոնի, դա փոփոխությունն է ընդհանրապես, փոփոխությունը, զրկված որակական որոշակիությունից, որը չի կարող կոնկրետ ձևով պատկերվել և ինտելեկտուալ ձևով ըմբռնվել։ Դա ընթացք է, անընդհատ անցում։ Այդ ընթացքը նույնպես անընդհատ է, ինչպես անցումը։ Անընդհատությունը այնպես է զրկված ընդհատությունից, որ չկան ոչ կոնկրետ իրեր, ոչ էլ կոնկրետ վիճակներ, իսկ եթե այդպիսիները թույլատրվում են, ապա միայն ենթադրվում են արհեստականորեն, անընդհատ վիճակի անօրինական անջատման շնորհիվ։ Բերգսոնյան «ներքին ժամանակի պատկերացման հիմքում դրված է հոչակավոր «տևականությունը»։ Անցնելով «ներքին զգացումից» «արտաքին զգացմանը», Բերգսոնը մոտենում է «արտաքին», «օբյեկտիվ», իրականում նույն սուբյեկտիվ ժամանակին։ Այն բացարձակ է,*

---

[1] А. Бергсон, Длительность и одновременность (по поводу теории Эйнштейна), Петербург, 1923.

ոչնչից չկախված, որովհետև «բոլոր անձերին հատուկ է «տևականության» միևնույն ըմբռնումը։ Հետագայում անձերից վերացատկումով Բերգսոնը գալիս է գեպի «միասնական ընդհանրական ժամանակին», որը կապված է «անգեմ գիտակցության» աստծո գաղափարի հետ։ Ըստ ինտուիտիվիզմի, պատահարների միաժամանակությունը և ժամանակային հաջորդականությունը ոչնչից կախված չեն, բացարձակ են, քանի որ դրանք ակնթարթորեն արձանագրվում են «ուշադրության անբաժանելի ակտով»։ Հարաբերականության տեսության երևան գալուց հետո պարզվեց, որ պատահարների հաջորդականությունը կարող է հանդես գալ որպես միաժամանակություն, իսկ միաժամանակությունը՝ որպես հաջորդականություն։ Ըստ էյնշտեյնի տեսության, միևնույն մարմինը կարող է ունենալ բազմաթիվ երկարություններ՝ տարբեր սիստեմներում և ժամանակի միևնույն տևողությունը կարող է ունենալ բազմաթիվ մեծություններ՝ կախված սիստեմների հարաբերական արագություններից։ Պարզ է, որ Բերգսոնը չէր կարող չմերժել այդ տեսությունը, քանի որ տևականությունը դրված է նրա ինտուիտիվիստական փիլիսոփայության հիմքում։

Բերգսոնը չի ժխտում հարաբերականության տեսությունը, չի ժխտում, օրինակ, հարաբերականության հատուկ տեսության հիմքում ընկած հարաբերականության պոստուլատը և լույսի արագության հաստատությունը։ Նա համաձայն է, որ այստեղ տեղի ունեն «ռելյատիվիստական էֆեկտներ», միաժամանակության և հաջորդականության խախտումներ, բայց համաձայն չէ այն պնդման հետ, որ այդ էֆեկտները օբյեկտիվ են, գիտակցությունից դուրս և անկախ։ Նա համաձայն չէ, որ այդ տեսությունը ժխտում է տևականության մասին իր ուսմունքը, իր սուբյեկտիվիստական ժամանակա-տարածական պատկերացումները։ Նա մանրամասն բացատրում է «միակողմանի հարաբերականությունը» (Լորենցի հիպոթեզը) և «երկկողմանի հարաբերականությունը» (էյնշտեյնի տեսությունը), բայց այդ տեսությունը պատկերացնում է ոչ ճիշտ։ Կոորդինատային սիստեմը նա պատկերացնում է որպես եթերում «անշարժ» գտնվող։ Կոորդինատային սիստեմը չի պատկերացնում այնտեղ «դիտողի» տեղադրումից անկախ։ «Երկարաձգված» ժամանակի ոչ օբյեկտիվությունը և «ֆիկտիվությունը» նա հիմնավորում է նրանով, որ ամեն մի դիտող, ժամանակը, որպես «փոփոխված» ըմբռնում է ոչ թե սեփականը, «տեղականը», այլ ուրիշի ժամանակը։ Ժամանակի ֆիկտիվության հասկացությանը «երկարացված» ժամանակի օրինակի վրա նա արտահայտվում է այսպես. «Իրական է այն, որը չափվում է իրական ֆիզիկոսի կողմից, ֆիկտիվ է այն, որը պատկերացվում է իրական ֆիզիկոսի կողմից, ֆիկտիվ է այն, որը պատկերացվում է իրական ֆիզիկոսի մտքով, որպես ֆիկտիվ ֆիզիկոսի չափման արդյունք»[2]։ Աբստրակտ դատողությամբ ժամանակի հարաբերականությանը հանգելը ինտուիտիվիստը համարում է անօրինական։ Բայց նույնպիսի աբստրակցիաների վրա են կառուցված նաև նրա «տևականությունը» («длительность»), «տիեզերական բանականությունը», «միասնական, ընդհանրական ժամանակը»։ Երկու հաշվարկային սիստեմներում տարբեր դիտողների ենթադրումը նա համարում է ոչ գիտական և գտնում է, որ դա հավասարազոր է երկու սիստեմների անշարժության ընդունմանը և հակասում է հարաբերակա-

---

[2] А. Бергсон, Длительность и одновременность, стр. 72.

նության տեսությանը։ Նրա մի շարք փիլիսոփայական դատողությունները ցույց են տալիս, որ նա կիրառում է «ավենարիուսյան կոորդինացիայի» նոր բերգսոնյան տարատեսակը, որը կոորդինացնում է զգայացվողը զգայացողի հետ։ Ինտուիտիվիստի ոգևորվածությունը հասնում է այն աստիճանի, որ նշված տեսության մեջ նա տեսնում է իր «տևականության» ավելի համոզիչ հիմնավորում, քան այն, որ կարող էր տալ դասական մեխանիկան։ Առաջ,— բացատրում է Բերգսոնը,—հաշվարկային սիստեմները հանդիսանում էին ոչ հավասարաչափ, նրանք կամ անշարժ էին, կամ շարժվող։ Նոր տեսության լույսի տակ նա տեսնում է սիստեմների բացարձակ համարժեքություն, որը նա դիտում է որպես տևականության անհատական զգայականությունների ավելի հավանական նույնականություն։ Բերգսոնը կարծում է, որ նրա տևականությունը վերաբերում է ոչ միայն հարաբերականության հատուկ տեսությանը, այլ նաև՝ ընդհանուր տեսությանը։ Նա գտնում է, որ ժամանակի պատկերացումը ընդհանուր տեսությունը պետք է ընդօրինակի հատուկ տեսությունից, իսկ տարածության պատկերացումը, հակառակը՝ հատուկը ընդհանուրից։ Հետազոտության արդյունքը հանգեցնում է այն եզրակացության, որ էյնշտեյնի տեսության մեկնաբանությանը ինտուիտիվիզմը մոտեցել է Բերկլիի, Լայբնիցի, Կանտի, Ավենարիուսի և մյուսների դասական իդեալիզմի դիրքերից։ Հարաբերականության տեսության նկատմամբ Բերգսոնի մոտեցումը բացահայտ իդեալիստական է և համեմատաբար ինքնուրույն։

Հարաբերականության տեսությունը հակասում է տարածության ու ժամանակի ոչ միայն ինտուիտիվիստական, այլև պոզիտիվիստական պատկերացումներին։ Մախիզմը հարաբերականության տեսության հետ համաձայնեցնելու դիրքերից է հանդես եկել «վենական խմբակի» հիմնադիրներից Մ. Շլիկը[3]։ Շլիկը տարբերում է «հոգեբանական» ինտուիտիվիստական, սուբյեկտիվ տարածությունը «տրամաբանական», «ֆիզիկական», «օբյեկտիվ», իրականում նույն սուբյեկտիվ տարածությունից։ Հարաբերականության տեսության հետևությունները նա վերագրում է ոչ թե «հոգեբանական», այլ «տրամաբանական» տարածությանը։ Մախիստը չի կարող թաքցնել, որ զգայությունները պարունակում են տարածությանը վերաբերող որևէ բան, չի կարող թաքցնել, որ այն արտացոլվում է աբստրակտ կերպով։ Բայց նա անջատում է միմյանցից զգայական օրգանների կողմից ընկալված տարածության զգացումը ֆիզիկական տարածությունից, ինչպես նաև տարածության աբստրակտ արտացոլումը գիտակցությունում տարածության զգայական ընկալումից։ Զգայականի և ռացիոնալի դիալեկտիկայի փոխարեն մենք գտնում ենք վերջիններիս մեխանիկական խառնուրդը։ Ժամանակին Է. Մախը (որը մերժել է «հարաբերականության տեսությունը» որպես ոչ գիտական) քննադատել էր կանտյան ժամանակա-տարածական պատկերացումները այն տեսանկյունից, որ նրանք զուրկ էին փորձնական ծագում ունենալուց։ Այս հարցում Մ. Շլիկը դավաճանում է իր ուսուցչին։ Ժամանակի և տարածության կանտյան տեսության «կորիղը», որի համաձայն ժամանակը և տարածությունը հանդիսանում են «մեր ինտուիցիայի ձևերը» և որոնք չեն կարող վերագրվել «ինքնին իրերին», նա գտնում է որպես «ճիշտ»։ Բայց նույն ժամանակ նա հանդես է գալիս «ճշմար-

---

3 М. Шлик, Время и пространство в современной физике. Сб. Теория относительности Эйнштейна и ее философское истолкование, ОНТИ, М.—Л., 1923.

տության» բավական ոչ պարզ արտահայտության դեմ, որի համաձայն խոսքը միակ տարածության մասին է, չտարբերելով «ինտուիտիվ տարածությունը» «ֆիզիկական տարածությունից»։ Նա հաղթահարում է մախիզմի և կանտականության որոշ հակասություններ և ճիգեր է գործադրում նրանց սինթեզման մեջ։ Մ. Շլիկը կանգնած է ընտրության առաջ. ընդունել հատուկ հարաբերականության տեսության բովանդակության օբյեկտիվությունը (դրանով իսկ մերժել տարածությունների մախյան «տեսությունը») թե տարածությունների մախյան տեսությունը, մերժելով հարաբերականության տեսության բովանդակության օբյեկտիվությունը։ Պրոբլեմը լուծելու համար նա դիմում է իդեալիզմի միջանկյալ տարատեսակությանը։ Տեսությունը ընդունվում է, բայց նրա եզրակացությունները վերագրվում են կանտյան և բերգսոնյան ոգով ըմբռնվող «մտավոր տարածությանը»։ Մասնակի հարաբերականության տեսության պոստուլատները Մ. Շլիկը համարում է ապրիորի։ Տեսության ճշմարտությունը նա գտնում է երևույթների «պարզորոշ բացատրման» մեջ։ Եթերի մերժումը այստեղ նույնացված է տարածության օբյեկտիվության ժխտման հետ։ Տեսության էությունը կայանում է նրանում, որ այն տվել է «չափման նոր մեթոդ»։ «Չափման մեթոդին» այստեղ նախորդում են արդյունքի մեկնաբանման սկզբունքները, որոնք հենված են կամավոր պայմանավորվածությունների վրա, կոնվենցիոնալիզմի ոգով։ Բերգսոնի մոտ կոորդինացված էին «զգացողը» և «զգայականը», իսկ Մ. Շլիկի մոտ՝ «չափողը» և «չափելին»։ Մ. Շլիկը, որը մերժում է (խոսքերով, բայց ոչ գործով) փիլիսոփայության հիմնական հարցի իմաստը՝ մատերիայի, շարժման, տարածության և ժամանակի օբյեկտիվության կամ սուբյեկտիվության հարցերը, դժվար է պատկերացնում դասական և ռելյատիվիստական մեխանիկայի հարաբերությունը, էվկլիդյան և ոչէվկլիդյան երկրաչափությունների հարաբերությունը։ Նրան դժվար է թաքցնել, որ մեկնաբանվող տեսությունը հակասում է Ա. Պուանկարեի այն տեսակետին, որի համաձայն «փորձը» երբեք չի ապարդի տարածության էվկլիդականությունը կամ ոչ էվկլիդականությունը։ Դժվար է համաձայնվել այն պնդման հետ, ըստ որի կպարզվի տարածության էվկլիդականությունը, որովհետև հարկ կլինի վերանայել «փորձի» նկատմամբ ցույց տրվող մոտեցումը։ Հակառակը պնդել հնարավոր չէ, քանի որ անիմաստ կդառնա էյնշտեյնի գաղափարները պարզաբանելուն և պրոպագանդելուն նվիրված նրա սեփական գիրքը։ Հարցի կոմպրոմիսային լուծումը հաջողվում է ավանդական «նկարագրման պարզության» կիրառման շնորհիվ։ Տեսության «նեոպոզիտիվացման» վերջում Մ. Շլիկը հայտարարում է, որ նա հանգել է հենց այն «ժամանակի և տարածության ըմբռնմանը, որը էյնշտեյնի կողմից ճանաչվել է որպես ֆիզիկայի համար միակ կարևորը»։ Դրանով իսկ փորձ է արվում մեզ համար կասկած չառաջացնող էյնշտեյնյան մատերիալիզմը փոխարինել պաշտպանվող նեոպոզիտիվիզմով։

Մ. Շլիկը չի թաքցնում, որ «աշխարհի խիստ պոզիտիվիստական պատկերացումը» չի բավարարում հռչակավոր հետազոտողներին։ Չափազանց դժվար է այդպիսի անսովոր տեսության մեկնաբանության հիմքում տեղավորել մախիստական «զգայականության կոմպլեքսները»։ «Ինտուիտիվ էլեմենտների» հետ մեկտեղ նա թույլատրում է «անմիջականորեն զգայացվող էլեմենտներ»։ Դրանով իսկ քայլ է արվում իդեալիստական «կոմպլեքսներից» դեպի իդեալիստական «նշանները» և «խորհրդանիշները»։ Այդ հարկադրված քայլում իր դերն

ունի հարաբերականության տեսությունը։ է. Մախը քննադատվում է Շլիկի կողմից, բայց հեղինակությունը ճնշում է նրան։ Սկսնակ նեոպոզիտիվիստի քայլերը անվստահ են։ Չդավաճանելով իր ճշմարտության չափանիշին, նա ընդգծում է, որ եթե երկու ըմբռնումները (նրա ու Մախի) հակասում են մեկը մյուսին, ապա չկա խիստ ապացույց հօգուտ որևէ մեկի ճշմարտության։ Արդյունքում սկեպտիցիզմին զոհաբերված է նույնիսկ սեփական իմացաբանությունը։ Սակայն նա համոզված է նրանում, որ ժամանակի և տարածության հասկացությունների էյնշտեյնյան վերլուծությունը գտնվում է զարգացման նույն գծի վրա, որի վրա և գտնվում է սուբստանցիայի և պատճառականության պատկերացման Յումի քննադատությունը։ Եվ այդ այն դեպքում, երբ Ա. էյնշտեյնը երկու տարի շարունակ չէր հրապարակել իր տեսությունը նախօրոք չհամոզվելով, որ պատճառականության օրենքը անձեռնմխելի է։ Ի տարբերություն Բերգսոնի, Մ. Շլիկը մատերիալիզմի դեմ հանդես է գալիս քողարկված։ Այստեղ մենք համոզվում ենք, որ իդեալիզմի տարատեսակություններից ամենավտանգավորը նեոպոզիտիվիզմն է։

Հարաբերականության տեսության մեկնաբանությունով հանդես է եկել նաև նեոկանտական է. Կասիրերը[4]։ Նա պաշտպանում էր նեոկանտականության ռելյատիվիստական տարատեսակությունը։ Նրա առջև խնդիր էր դրված. վերանայել կանտական ապրիորիզմը, որը սերտ կապված է ժամանակի և տարածության կատեգորիաների հետ։ Իրոք, հարաբերականության տեսության լույսի տակ ժամանակի տևողությունը և մարմնի տարածական չափերը կարող են ունենալ բազմաթիվ արժեքներ, տարբեր հաշվարկման սիստեմներում։ Ըստ Կանտի, ժամանակը և տարածությունը, որպես «զուտ հայեցողության ապրիորի ձևեր» սուբյեկտիվ են, բացարձակ և անշարժ։ Հակադրությունը ակնհայտ է։ Պատմական ապրիորիզմը պաշտպանելու համար Կասիրերն ամեն ինչ անում է, որ մեկնաբանվող տեսությունը սուբյեկտիվացվի սկսած ելադրույթներից։ Պոստուլատները և աքսիոմները նա համարում է ապրիորի։ Հասկացություններում և կատեգորիաներում չի տեսնում «եզակի բովանդակությունների արտացոլում»։ Մատերիալիզմն անվանելով «միամիտ և դոգմատիկ ռեալիզմ», նա վերաբերվում է անբարյացակամորեն։ Նա ընդունում է վերոհիշյալ Շլիկի «չափման տեսությունը», ավելացնելով, որ չափմանը և չափման արդյունքի մեկնաբանմանը միշտ նախորդում է «չափման և չափման արդյունքի մեկնաբանման գաղափարը»։ Կասիրերը համառորեն պրոպագանդում է ժամանակի և տարածության անցումը «հատկություններ» կատեգորիաների շարքից դեպի «հարաբերություններ» կատեգորիաների շարքը։ Բայց հարաբերություններն այստեղ ըմբռնվում են Կանտի ոգով։ Չէ՞ որ «զուտ բանականության քննադատության» մեջ, Կանտը պնդում է, որ «մեզ արտաքին զգայության միջոցով չի տրված ոչինչ, բացի հարաբերության պատկերացումից, իսկ արտաքին զգայությունը իր պատկերացման մեջ կարող է պարունակել միայն հարաբերությունը առարկայից դեպի սուբյեկտը, այլ ոչ այն ներքինը, որը հատուկ է ինքնին օբյեկտին»[5]։ Նմանությունը հարաբերությունների միջև, ըստ էյնշտեյնի (մատերիալիստական) և ըստ Կանտի (իդեալիստական), միայն տերմինական է և ոչ իմաստական։ Այս լույսի տակ այն հե-

---

4 Э. Кассирер, Теория относительности Эйнштейна, Петроград, 1922.

5 И. Кант, Критика чистого разума, 1902.

տևությունը, որ «տեսությունը (հարաբերականության—Հ. Ա.) տալիս է քննադատական իդեալիզմի տեսակետի ամենաորոշակի կիրառությունը և նրա իրականացումը կյանքում, հենց քննադատական գիտության ներսում»[6], բավական հապճեպ է։

Հարաբերականության տեսության մեջ Կասիրերը ձգտում է տեսնել ժամանակի և տարածության կանտյան ուսմունքը որպես «հոգու ամուր օրենք», «լծորդման սխեմա», «արտաքին ակնառու պատկերաձև»։ Նա փնտրում է այն գծերը, որոնք մերձեցնում են կանտյան վերոհիշյալ պատկերացումները էյնշտեյնյան պատկերացումների հետ։ Կանտը, ինչպես էյնշտեյնը,—գրում է Կասիրերը,—գիտակցել է, որ ամեն մի տարածություն պատկերացնելի է միայն որպես հարաբերական։ Կանտը ժամանակը և տարածությունը որպես «իրեր» չի ընդունել այնպես, ինչպես և էյնշտեյնը։ Այն, որ հարաբերականության տեսությունը պարունակում է «իդեալական մոմենտ», էյնշտեյնը չի կարող ժխտել այնպես, ինչպես և ցանկացած «պոզիտիվիստը» ընդհանրապես։ Ժամանակի և տարածության հասկացությունների հիմնայնությունը, որոնք չեն կարող դուրս բերվել ավելի հիմնականից, Կանտը և էյնշտեյնը գիտակցել են հավասարապես։ Տարածությունը և ժամանակը հատուկ հարաբերականության տեսության մեջ համասեռ են այնպես, ինչպես Կանտի պատկերացման մեջ։ Տարբերությունը միայն նրանում է, որ ժամանակը և տարածությունը էյնշտեյնի մոտ կապված են շարժման հետ, իսկ Կանտի մոտ՝ «անշարժ են» (Հ. Ա.)։ Բայց ինչու,—զարմանում է նեոկանտականը,—Կանտի «զուտ հայեցողական պատկերացման» մեջ պետք է դիտել «անշարժ պատկեր» և ոչ թե «կոնստրուկտիվ մեթոդ։ Փոխարինելով «պատկերը» «մեթոդով», որը չի հակասում Կանտի իմացաբանության տեսությանը, այլ ընդհակառակը «պահանջվում է» նրա էությամբ, «բացահայտում է» կանտյան ապրիորիզմի ուսմունքի հակառակորդների մոտ այդքան տարածված թյուրիմացությունը։

Նախքան ապրիորիզմի փոփոխության հիմնավորումը (որը նեոկանտականության կողմից հարաբերականության տեսության ընդունելու միակ ելքն է հանդիսանում) Կասիրերը մատուցում է հատուկ «դիալեկտիկան»։

Մտածողությունը, կարդում ենք Կասիրերի մոտ, համաձայն իր պահանջների, փոփոխում է ամեն ինչի հիմքում ընկած «պարզ» չափողական հարաբերությունների ձևերը»[7]։ Նախօրոք ձեռք բերված և խիստ սահմանված փորձի հարաբերությունները մտնում են նոր մտավոր կապի մեջ։ Մտածողության «հենակետները» շարժման մեջ են մտնում և փոխարինվում են։ Առաջին ելակետը փոխարինվում է երկրորդով, երկրորդը—երրորդով։ Նեոպոզիտիվիզմի համար նախատեսված ապրիորիզմի փոփոխելիությունը հիմնավորող այս «միակողմ» դիալեկտիկան չի բացատրում նշված «շարժման» սկզբնաշարժիչը։ Բացի այդ, կասիրերյան ապրիորիզմի դիրքերից հնարավոր չէ բացատրել, ինչո՞ւ նյուտոնյան ժամանակա-տարածական պատկերացումներն են նախորդել էյնշտենյան պատկերացումներին և ոչ հակառակը։ Ամբողջ հույսը Կասիրերի մոտ կապված է իմացության սուբյեկտիվ մոմենտի հետ, և նա անում է ամեն ինչ այն օգտագործելու համար։

---

[6] Э. Кассирер, Теория относительности Эйнштейна, стр. 82.
[7] Э. Кассирер, Теория относительности Эйнштейна, стр. 27.

Էյնշտեյնի կողմից տարածության, ժամանակի և ձգողականության ֆիզիկական տեսությունը խառնաշփոթություն առաջացրեց ժամանակի և տարածության սուբյեկտիվությունը քարոզող բոլոր իդեալիստների մոտ։ Պատմությանը արդեն պատկանող իդեալիստական մի շարք մեկնաբանություններ այսօր հնչում են բավական կուրյոզ և հումորիստական։ Այս դասը մոռացության է տալիս ժամանակակից նեոպոզիտիվիզմը, որը շարունակում է «հերքել» մատերիալիզմը հարաբերականության տեսության ցուցանակի տակ, եռանդագին քրքրելով փիլիսոփայական իդեալիզմի իր դարն ապրած արսենալը։

О. АДИБЕКЯН

ФИЛОСОФСКИЙ ИДЕАЛИЗМ И ТЕОРИЯ ОТНОСИТЕЛЬНОСТИ

Резюме

Современная борьба с идеалистическими интерпретациями теории относительности ведется преимущественно против неопозитивизма. Исследование современно-неопозитивистского подхода к упомянутой теории ведет к вскрытию эволюции ее и корней. При этом обнаруживается, что неопозитивизм использует (и стремится скрыть такое заимствование) отжившие аргументы, выдвинутые в свое время разными идеалистическими школами против материализма. В данной статье затрагиваются интуитивистская, позитивистская и неокантианская интерпретации специальной теории относительности, выдвинутые А. Бергсоном, М. Шликом и Э. Кассирером в период до 1922 г.